ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"___9__" ___11___2012թ. № 114 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ԵՎ <<ՀԱԼԻՃՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1) ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով և համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2012թ. հաստատված աշխատանքային ծրագրի 6-րդ կետի,

կ ա ր գ ա դ ր ում եմ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի <<Շինուհայրի միջնակարգ դպրոց>> և <<Հալիձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում ուսումնադաստիարակչական աշխատանքները և պետական հանրակրթական ծրագրերի իրագործման գործընթացն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ն.Ասատրյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի նախագահ/.
Վ. Այվազյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ.
Ի.Բալայան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

2. Հանձնաժողովին՝աշխատանքները իրականացնել վեցօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացում:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. նոյեմբերի 9
ք. Կապան